Արձանագրություն N 2-1
ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/9 ծածկագրով վարչական սարքավորումների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 08.01.2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Շ. Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Աբգարյան
Ն. Մակարյան
Ժ. Մելքոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Լ. Թադևոսյան

1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Շ. Գրիգորյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

գ) Հայտերի ներկայացման վերջնաժամկետը eauction.armeps.am էլեկտրոնային համակարգում սահմանվել է մինչև 07.01.2026թ. ժամը 11:00-ն: Ընթացակարգի աճուրդը կայացել է eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 08.01.2026թ. ժամը 11:00-11:30-ը:

դ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Չափաբաժին N 1 *սկաներներ համակարգիչների համար*									
Հերթ.	Ներկայացված հայտեր	Գնման գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«ՍԵԳ» ՍՊԸ	800 000	998 600	20 %	1 198 320	988 600	20 %	1 186 320	Մերժ-ված
2	ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ		25 000 000	20 %	30 000 000	25 000 000	20 %	30 000 000	Մերժ-ված
Չափաբաժին N 2 *համակարգիչ ամբողջը մեկում*									
1	«ՍԵԳ» ՍՊԸ	480 000	478 400	20 %	574 080	399 000	20 %	478 800	
2	«ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ		25 000 000	20 %	30 000 000	25 000 000	20 %	30 000 000	Մերժ-ված

Քանի որ 1-ին չափաբաժնի մասով «ՍԵԳ» ՍՊԸ-ի և 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են գնման գինը, համակարգն ավտոմատ եղանակով մերժել է մասնակիցների հայտերը:

2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

1.2 Հաշվի առնելով, որ 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկները գերազանցում է գնման գինը, գնահատող հանձնաժողովը որոշում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/9 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

2. 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ. հասցեն

(Շ. Գրիգորյան)

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցե	Կապի միջոց	Էլեկտրոնային փոստի հասցե
1	«ՍԵԳ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան Կուրղինյան նրբ. 6 շենք, բն.32	055-01-90-60, 077-66-07-86, 093-36-93-77	seg_tender@mail.ru

3. 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման մասին

(Շ. Գրիգորյան)

3.1 Գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՍԵԳ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ չի ներկայացվել սպասարկման կենտրոնի տվյալները:

3.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «ՍԵԳ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 09.01.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում eauction.armeps.am համակարգի միջոցով շտկում ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Շ. Գրիգորյան)

4.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունը մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 12.01.2026թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Շ. Գրիգորյան

Անդամներ՝ ---------- Մ. Աբգարյան

---------- Ն. Մակարյան

---------- Ժ. Մելքոնյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան